

## ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

### ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԿՐԱՍՏԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 28-ԱՄՅԱԿԸ



**28 տարի առաջ՝ 1995 թվականի օգոստոսի 24-ին, Վրաստանի այն ժամանակվա Գերագույն խորհուրդը հավանություն տվեց նորանկախ Վրաստանի ժողովրդավարության հաստատմանն ուղղված Սահմանադրության նոր խմբագրմանը:**

Սահմանադրության օրվա առիթով Վրաստանի վարչապետ Նիկոլ Գալաշվիլին իր շնորհավորական ուղերձում նշել է, որ անասան հավատարմությունն ու գերագույն օրենքի պաշտպանությունը կարեւորագույն պայման են քաղաքացիական միասնության, խաղաղության, բարգավաճման, կայունության եւ երկրի առաջընթացի համար:

Շնորհավորում են Սահմանադրության օրվա առիթով: Օգոստոսի 24-ը մեր պետականության համար ամենակարեւոր օրն է: 1995թ.-ի այս օրը անկախ Վրաստանի խորհրդարանը, ընդունելով երկրի գերագույն օրենքը, մեր պատմության մեջ սկսեց նոր փուլ՝ քաղաքացիական միասնության, օրենքի գերակայության, ազատության, իդեալների վրա հիմնված պետության կառուցումը, - հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ Վրաստանի Սահմանադրությունը՝ մեր պայմանագիրը միմյանց եւ պետության հետ, հիմնված է մեծ պատմության ու նշակույթի որոշիչ արժեքների վրա: Այս օրը միասնության պահ է, որը եւս մեկ անգամ հաստատում է մեր ընդհանուր որոշումը՝ կառուցելու պայծառ ապագա՝ միասնական, խաղաղ, ուժեղ, զարգացած Վրաստան, - հայտարարել է Իրակլի Գալաշվիլին:

Սահմանադրությունը մեր պայմանագիրը միմյանց եւ պետության հետ, հիմնված է մեծ պատմության ու նշակույթի որոշիչ արժեքների վրա:

Այս օրը միասնության պահ է, որը եւս մեկ անգամ հաստատում է մեր ընդհանուր որոշումը՝ կառուցելու պայծառ ապագա՝ միասնական, խաղաղ, ուժեղ, զարգացած Վրաստան, - հայտարարել է Իրակլի Գալաշվիլին:

**Իհարկէ, անցած 28 տարիների ընթացքում, երկիրն անցավ նորանկախ պետությունների բնորոշ հաստատման որոշակի ուղի, եւ պատահական չէր, որ համաշխարհային փոփոխվող իրավիճակին համապատասխան, որոշակի փոփոխություններ էին կատարվում նաեւ հիմնական օրենքում: Նշենք, որ «Վրացական երազանք» կուսակցության նախաձեռնությամբ դեռեւս 2018 թվականին իրականացվեցին փոփոխություններ, որոնք երկրի գլխավոր փաստաթղթում է՛լ ավելի ընդգծեցին ժողովրդավարության եւ եվրոպական արժեքների հավատարմության գաղափարները, եւ այսօր Վրաստանն ունի կայուն ժողովրդավարական զարգացման համար եվրոպական չափորոշիչներին համապատասխանող Սահմանադրություն:**

## ՀԱՅԱՍՏԱՆ

### 33 ՏԱՐԻ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՋԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ

**Օգոստոսի 23-ին Հայաստանը նշեց Անկախության հռչակագրի 33-ամյակը:**

Անկախության հռչակագրի տարեդարձի առիթով երկրի բնակիչներին շնորհավորել եւ ուղերձ են հղել Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Անկախության հռչակագրի օրվա կապակցությամբ իր շնորհավորական ուղերձում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ 1990 թվականի օգոստոսի 23-ին դրվեց անկախ Հայաստանի հաստատման գործընթացի սկիզբը:

Անկախության հռչակագիրը շրջադարձային փաստաթուղթ է, որով հիմք դրվեց մեր այսօրվա պետականությանը:

Հռչակագրի տեքստի քննական վերլուծությունն ի ցույց է դնում, որ մենք ի վերջո ընտրել ենք այնպիսի խոսույթ ու բովանդակություն, որի հիմքում դրված է մեզ հարիւրամյակին Միության մաս դարձրած բանաձեւը. խոսքը տարածաշրջանային միջավայրի հետ կոնֆրոնտացիոն խոսույթի մա-



սին է, որ մեզ անընդհատ կոնֆլիկտների մեջ էր պահելու մեր հարեւանների հետ:

Անկախության հռչակագրով մենք հռչակեցինք հարիւրամյակին Միությունից հեռանալու ուղեգիծը, բայց եւ փակեցինք հարիւրամյակին Միությունից հեռանալու մեր բոլոր ճանապարհները, ասել է, թէ 20-րդ դարավերջին ընդունված Անկախության հռչակագրով որդեգրեցինք մի բանաձեւ, որը 20-րդ դարակազմի մեջ արդեն իսկ բերել էր անկախության կորստի: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ԷԿՈՆՈՄԻԿԱ

### ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՊԱՅՊԱՆՈՒՄ Է

**Վրաստանի վարչապետ Իրակլի Գալաշվիլին նախագահությամբ անցկացվեց տնտեսական խորհրդի նիստ, որտեղ քննարկվեցին երկրում տնտեսության դրական միտումները:**

Քննարկված հարցերի թվում գնաճի ցածր մակարդակը եւ բյուջեի կատարման դինամիկան էր: Ինչպես նշեց ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին՝ հունիսին սպառողական գների տարեկան գնաճը կազմել է 0,3 տոկոս, իսկ 2023 թվականի վեց ամիսների ցուցանիշների համաձայն՝ բյուջեն գերակատարվել է: Նիստում ներկայացվեց տեղեկատվություն տարածաշրջաններում եւ ենթակառուցային նախագծերի իրականացման ընթացքի մասին: Ինչպես նշեց Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների ծրագրի ղեկավար Գալաշվիլին՝ 2023 թվականի վեց ամիսների պետական բյուջեն՝ գերազանցելով 13,5 տոկոսով կամ 1,331,1 մլն լարիով: Ընթացքի մեջ է 203 կմ ավտոճանապարհի շինարարությունը, որի բացումը նախատեսվում է 2023-2024 թվականներին, փուլաբար: Ամբողջ երկրում վերականգնվում են մինչեւ 1800 կմ երկարությամբ ներքին պետական եւ տեղական նշանակության ճանապարհները: Ավելի քան 3 միլիարդ լարի արժույթով ջրամատակարարման եւ ջրահեռացման ծրագրեր են իրականացվում 167 բնակավայրերում: Մարզական ենթակառուցվածքի զարգացման նպատակով 2-րդ էջում)



քին պետական եւ տեղական նշանակության ճանապարհները: Ավելի քան 3 միլիարդ լարի արժույթով ջրամատակարարման եւ ջրահեռացման ծրագրեր են իրականացվում 167 բնակավայրերում: Մարզական ենթակառուցվածքի զարգացման նպատակով 2-րդ էջում)

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Վրաստանի արդարադատության փոխնախարար Վլադիմիր (Բուբա) Լոմիաշվիլին ընդունեց դեռեւս անցյալ տարի Բեռլինում՝ Վրաստանի եւ Գերմանիայի արդարադատության նախարարների կողմից ստորագրած 2022-2025 թվականների համագործակցության համաձայնագրի շրջանակներում Վրաստան ժամանած Գերմանիայի Հյուսիսային Ռայն-Վեստֆալ դաշնային մարզի արդարադատության նախարար Բենյամին Լիմբախին:**

Հանդիպմանը Վլադիմիր Լոմիաշվիլին նշեց, որ Վրաստանում քրեակատարողական համակարգը լրիվությամբ համապատասխանում է եվրոպական եւ միջազգային չափորոշիչներին: Նրա խոսքով՝ համակարգի բարեփոխման ընթացքում իրականացվել են նշանակալի ենթակառուցային նախագծեր: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

նախարար Բենյամին Լիմբախին: Նրա խոսքով՝ համակարգի բարեփոխման ընթացքում իրականացվել են նշանակալի ենթակառուցային նախագծեր: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

### ԹԵՆԳԻԶ ՑԵՐՑՎԱԶԵ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՆԿԱՏՎՈՒՄ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄՎ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՊԵՐԻ ԱՎԵԼԱՅՈՒՄ»



**Ինչպես հայտարարել է Թեգիսի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն Թենգիզ Ցերցվազեն, Վրաստանում նկատվում է կորոնավիրուսով վարակման դեպքերի ավելացում:**

Նրա խոսքով վերջին մեկ շաբաթվա ընթացքում բացահայտվել է վարակման ավելի քան 300 դեպք մեկ օրում, լաբորատոր ստուգումների դրական ցուցանիշը կազմել է 7-8 տոկոս: Ամեն օր իրականացվող թեստերի (ստուգվում է շուրջ 4000 մարդ) դրական ցուցանիշը կազմել է 7-8 տոկոս, ավելացել է հոսպիտալացվածների թիվը, թեպետ, մահացության մակարդակը շարունակում է մնալ նվազ մակարդակի (վերջին մեկ ամսվա ընթացքում մահվան մեկ դեպք), - ասել է Թենգիզ Ցերցվազեն եւ հավելել, որ Վրաստանում բացառված չէ, որ սկսել է տարածվել կորոնավիրուսի «Omicron EG.5» ենթատեսակը, որը հայտնի է որպես «էրիս»

է շուրջ 4000 մարդ) դրական ցուցանիշը կազմել է 7-8 տոկոս, ավելացել է հոսպիտալացվածների թիվը, թեպետ, մահացության մակարդակը շարունակում է մնալ նվազ մակարդակի (վերջին մեկ ամսվա ընթացքում մահվան մեկ դեպք), - ասել է Թենգիզ Ցերցվազեն եւ հավելել, որ Վրաստանում բացառված չէ, որ սկսել է տարածվել կորոնավիրուսի «Omicron EG.5» ենթատեսակը, որը հայտնի է որպես «էրիս» (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ԿՐՈՆԱԿԱՆ

### ՄԵԾ ԽԱՆԶԱԼԻՈՒՄ ԵՎ ԳՈՄԱՆՈՒՄ ՍԿՍՎԵՑ ԽՈՆԱՐԿՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Օգոստոսի 19-ին, Ջավախքի կատարած իր Առաջնորդական այցի շրջանակներում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետի վարչությանը, Սամցխե-Ջավախքի եւ Ծալկայի Առաջնորդական փոխանորդ Տեր Նշան վարդապետ Հմայակյանի ուղեկցությամբ եւ Նինոծմինդայի «Սուրբ Սարգիս» եկեղեցու ու հարակից գյուղերի հոգևոր հովիվ Տեր Արմաշ քահանա Պողոսյանի մասնակցությամբ, ծանոթացավ Նինոծմինդայի շրջանի Մեծ Խանջալի գյուղի խոնարհված «Սուրբ Աստվածածին» եկեղեցու վերակառուցման աշխատանքների մեկնարկին: Նույն օրը Վիրահայոց թեմի առաջնորդը, Սամցխե-Ջավախքի եւ Ծալկայի Առաջնորդական փո-

խանորդի ուղեկցությամբ եւ Ախալքալաքի մունիցիպալիտետի Արաբկա գյուղի «Սուրբ Գեորգ» եկեղեցու ու հարակից գյուղերի հոգևոր հովիվ Տեր Թադեոս Տեր Մկրտչյանի մասնակցությամբ, ծանոթացավ Ախալքալաքի մունիցիպալիտետի Գոմանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցու վերակառուցման աշխատանքների ընթացքին: Թեմակալ առաջնորդը եւ փոխառաջնորդը, իրենց օրհնության խոսքում, բարձր գնահատեցին տեղացիների ճիշտ մոտեցումը՝ գյուղում աղոթատեղի ունենալու կարեւորությունը եւ շնորհավորեցին աշխատանքների մեկնարկի կապակցությամբ, եւ իրենց գոհունակությունը հայտնեցին Վիրահայոց թեմում գործող եկեղեցիների շարքի համալրման առիթով:



ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԻՐԱՎԿԼԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼՈՒ ԶՐԱԺԵՇՏԻ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ ՔԵԼԼԻ ԴԵԳՆԱՆԻ ԶԵՏ

Օգոստոսի 18-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հրաժեշտի հանդիպում անցկացրեց Վրաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Քելլի Դեգնանի հետ:



Չանդիպմանը կողմերն ընդգծեցին Վրաստանի և ԱՄՆ-ի միջև ռազմավարական գործընկերության կարևորությունը և քննարկեցին համագործակցության առաջնահերթ օրակարգը: Կառավարության ղեկավարը շնոր-

հակալություն հայտնեց ԱՄՆ դեսպանին աշխատանքի համար և հաջողություն մաղթեց նրան: Կառավարության աշխատակազմում տեղի ունեցած հանդիպմանը մասնակցեց ԱՄՆ դես-

պանատան տնտեսական բաժնի ղեկավար Ջին Ֆոսթերը:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՉԼԻՄԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԴԱՀՊԱՆՈՒՄՆ Ե

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կով՝ Ախալցխեում, Ջուզղիդիում, Արխիլոսկալո գյուղում, Բուճիսիում, Ծնորիում ընթանում են մարզահամալիրների և բազմազործառույթ մարզասրահների կառուցում: Ռուսթավի մարզահամալիրի շինարարությունն ավարտման փուլում է:

Նիստում քննարկվեց նաև վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու մեկ այլ նախաձեռնության՝ մեկ միլիարդ լարի արժողությամբ 800 դպրոցի կառուցման ու վերականգնման լայնածավալ ծրագիրը: Ծրագրի առաջին փուլում ընթացքի մեջ է 80 նոր դպրոցի

կառուցման և 200 դպրոցի վերականգնման գործընթացը:

Չափորոշ փուլը կսկսվի 2024 թվականին և կավարտվի 2026-ի վերջին: Ծրագիրն ապահովում է կրթական ռեսուրսների հավասար հասանելիություն ու բարելավում, և ավելի քան 230 000 ուսանող կշահի դրա իրականացումից:

Վարչապետի որոշմամբ, մեկնարկած քաղաքների և առողջարանների գաղափարն ուր հնգամյա ծրագրի շրջանակներում, առաջին փուլում ընտրված 11 տեղանքների գաղափարն ու մրցույթ է հայտարարվել: Քննարկված հարցերից էին գբոսաշրջության ուղղությամբ դրական միտումները:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻԼԻԱ ԴԱՐՉԻԱՇՎԻԼԻ. «ԴՄԻՏՐԻ ՄԵՂՎԵՂԵՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՆԱՉԱՎԹՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ Ե՛»

Օգոստոսյան պատերազմի 15-րդ տարելիցի կապակցությամբ Ռուսաստանի Անվտանգության խորհրդի փոխնախագահ Դմիտրի Մեղվեղեևի հայտարարությունը՝ Ռուսաստանի կողմից վրացական տարածքների բռնազավթման քաղաքականության շարունակությունն է, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության դեմ ոտնձգության եւս մեկ փորձ,- հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին՝ մեկնաբանելով Մեղվեղեևի հայտարարությունը, ըստ որի՝ Աբխազիան և Չարավային Օսեթիան Ռուսաստանին միացնելու գաղափարը դեռ տարածված է, և այն կարող է կյանքի կոչվել, եթե դրա համար լավ պատճառ լինի:

Վրաստանի խորհրդարանի մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման կոմիտեի նախագահ Սիխեիլ Սարջվելաձեն, իր հերթին, հայտարարեց, որ բռնազավթված Աբխազիայի և Ցխինվալիի տարածաշրջանի հարցով Մեղվեղեևի հայտարարությունը կտրականապես անընդունելի է:



- Վաղ թե ուշ՝ Վրաստանի տարածքային ամբողջականության գաղափարը իրականություն կդառնա, քանի որ դա պատմական արդարություն է, հայտարարեց Սիխեիլ Սարջվելաձեն:



Վրաստանի ԱԳ նախարարը Ռուսաստանին կոչ արեց՝ հարգել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներն ու նորմերը և կատարել 2008 թվականի օգոստոսի 12-

ի զինադադարի պայմանագիրը՝ նշելով, որ Վրաստանը հաստատակամորեն հավատարիմ է հակամարտության խաղաղ կարգավորման քաղաքականությանը՝ այդպիսով ապահովելով Վրաստանի տարածքների ապաստանությունը և պատերազմի արդյունքում բաժանված բնակչության հաշտեցումը:

ՀԱՍՏԱՎՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խագծեր, մասնավորապես, գործարկվել են վերականգնողական-վերասոցիալականացման ծրագրեր, ընդլայնվել են դատապարտյալներին աշխատանքով ապահովելու հնարավորությունները, բարելավվել են ինչպես համակարգի աշխատողների, այնպես էլ՝ բանտարկյալների կենցաղային պայմանները:

Վրաստանի արդարադատության փոխնախարարը հիշեցրեց նաև, որ մշակվել է քրեակատարողական նոր

ռազմավարություն, ծրագրվում է փոքր չափերի քրեակատարողական հաստատությունների շինարարություն:

Գերմանիայի Յուստիսային Ռայն-Վեստֆալ դաշնային մարզի արդարադատության նախարար Բենյամին Լիմբախը հետաքրքրությամբ ընդունեց արդարադատության ոլորտում Վրաստանում ներդրվող նորամուծությունները՝ շեշտելով, որ Վրաստանի կողմից վերջին տարիներին քրեակատարողական համակարգում իրականացրած բարեփոխումների արդյունքներն ակնհայտ են ու ողջունելի:



ՏԱՐԵՐ

ՇՈՎԻՈՒՄ ՍՈՂԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԶՈՐԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՍԵԼ Ե 31-Ի, ԵՐԿՈՒՄԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ԱՆՐԵՏ ԿՈՐԱԾ

ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՃԱՆՃԱԽԱՆ ԵՎ ՌԻՈՆԻ ԳԵՏԵՐԻ ՀՈՒՆԵՐՈՒՄ

Օմիի մունիցիպալիտետի Շովի հանգստավայրում տեղի ունեցած տարերային աղետի զոհերի թիվը հասել է 31-ի: Երկուսը համարվում են անհետ կորած:

Որոնողական աշխատանքները, որտեղ ներգրավված է կենդանի ուժ, ծանր տեխնիկա և կինոլոգների խումբ, շարունակվում են Շովի հանգստավայրի տարածքում և ճանախա ու Ռիոնի գետերի հուններում:

Ռազմարման ծառայության ղեկավար Թեմուր Մղեբրիշվիլին աղետի էպիկենտրոնից 40 կիլոմետր հեռավորությամբ Սորի գյուղի մոտ, տղամարդու դի է հայտնաբերվել:

- Բացի այդ, աղետի էպիկենտրոնում ստուգումներ են իրականացվում: Որպես ուղե-

ցույց վերցրել ենք ութ հեկտար տարածք, որտեղ այսօր նկատվել է եւս մեկ դեռահասի դի, ինչպես նաև առանձին՝ մեկ անձի բեկոր: Այս պահին որոնողական աշխատանքներն ակտիվ շարունակվում են: Մնացել է երկու մարդ, և մենք շարունակում ենք որոնողափրկարարական աշխատանքները: Ինչ վերաբերում է տեսական շանսերին, ապա, ինչպես հայտարարել էինք առաջին օրե-

րին, այն կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ բոլոր հույսերը կսպառվեն, և գործը շարունակելու իմաստ չի ունենա»:

Պիտոն Կիլաձե



ԱՄՆ ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԸ ԳՐԱՎԻ ԴԻՄԱՑ ԱԶԱՏՎԵԼ Ե ԲԱՆՏԻՑ

ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփը, Ֆուլթոն շրջանի բանտ ներկայանալուց հետո, ձերբակալվել է և գրավի դիմաց ազատ արձակվել:

Բանտում ընթացակարգերը տեւել են մոտ 20 րոպե: Թրամփից մատնահետք են վերցրել և լուսանկարել բանտում: Թրամփին ազատ է արձակվել՝ 200 հազար դոլար գրավի դիմաց: Նրան արգելվում է նաև օգտագործել սոցիալական ցանցերը՝ թույլ չտալու գործով իր 18 համախոհների, ինչպես նաև որեւէ վկաների կամ 30 չհիմնավորված հանցակիցների վրա ճնշում գործադրել:

Չիչեցնենք, որ Թրամփին մեղադրանք է առաջադրվել ավելի քան տասը հոդվածով՝ Ջորջիա նահանգում 2020 թվականի նախագահական ընտրությունների արդյունքները փոխելու փորձի գործով:

Նախկին նախագահին այս տարի արդեն 4-րդ անգամ քրեական մեղադրանք է առաջադրվել:

«BRICS» ՄԻՎՈՐՈՒՄԸ ԸՆԴԱՅՆՎՈՒՄ Ե

Չարավային Աֆրիկայում անցկացված «BRICS»-ի գագաթաժողովում, անդամ երկրների ղեկավարները որոշել են միության նոր անդամներ դառնալու համար հրավիրել եւս վեց երկրներ՝ Արգենտինա, Եգիպտոս, Իրան, Եթովպիա, Սաուդյան Արաբիա և Արաբական Միացյալ Էմիրություններ: Չիչեցնենք, որ հինգ երկրների՝ Բրազիլիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի, Չինաստանի և Չարավային Աֆրիկայի միության գագաթաժողովում բլոկի ընդլայնումը գլխավոր խնդիրներից մեկն էր:

Չարավային Աֆրիկայում անցկացված «BRICS»-ի գագաթաժողովում Ռուսաստանը ներկայացրել է արտագործնախարար Սերգեյ Լավրովը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՎԻՎՈՐՈՒՄ ԶՈՐՎԵԼ Ե «ՎԱԳՆԵՐԻ» ԴԵՎՎԱՐԸ

Օգոստոսի 23-ին, Տվերի մարզում, Մոսկվայի Շերեմետևոյի Սանկտ Պետերբուրգ թռչող մասնավոր ինքնաթիռ է կործանվել: Ուղեորների թվում է եղել «Վագների» ղեկավար Եվգենի Դրիզդինը: Ինքնաթիռում տասը մարդ է եղել՝ 7 ուղևոր և 3-ը՝ անձնակազմի անդամներ, բոլորը մահացել են:

Բիզնես-ջեթում գտնվող 7 ուղևորներն էին Եվգենի Դրիզդինը, Դմիտրի Ուտկինը, Սերգեյ Պրոպուստինը, Եվգենի Մակարյանը, Ալեքսանդր Տոսմինը, Վալերի Զեկալովը և Նիկոլայ Մատյուսենը:

Օդային տրանսպորտի դաշնային գործակալությունը հետաքննություն է սկսել «Embraer» ինքնաթիռի կործանման փաստով:

ԻՏԱԼԻԱ ՄԱՐՄԵԼ Ե ԱՇԽԱՐՀԱՅՈՉԱԿ ԵՐԳԻՉ ՏՈՏՈ ԿՈՒՏՈՒՆԻՈՆ

Օգոստոսի 22-ին, Ռուսում տարեկան հասակում, մահացել է իտալացի աշխարհահռչակ երգիչ և կոմպոզիտոր Տոտո Կուտունինոն:

Երգչի մեծերը Դանիլո Մանկուզոյի խոսքով՝ Կուտունինոն մահացել է երկարատև հիվանդությունից հետո: Վերջին ամիսներին նա իրեն շատ ավելի վատ էր զգում և բուժվում էր Միլանի Սան Ռաֆայել հիվանդանոցում: Սակայն բժիշկներին չի հաջողվել փրկել երգչի կյանքը:





Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ՎՐԱՍԱՆ - ՆԱՏՕ

«ՃԿՈՒՆ ՈԳԻ - 2023» ՀԱՄԱՏԵՂ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՕԴԱԴԵՍԱՆՏԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Օգոստոսի 23-ին Վրաստանում մեկնարկեցին «Ճկուն ոգի-2023» (Agile Spirit-2023) բազմազգ զորավարժությունները՝ օդադեսանտային ուժերի մասնակցությամբ:

Վրաստանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայության հաղորդագրության համաձայն՝ Վրաստանը 11-րդ անգամ է ընդունում Agile Spirit-2023 զորավարժությունները: Վարժանքների առաջին ցուցադրական բաղադրիչը տեղի է ունեցել Վազիանի ռազմական օդակայանի տարածքում: ԱՄՆ-ի եվրոպական հրամանատարության 173-րդ ղեկավարի թիմի ղեկավար ամենակազմը վայրէջք է կատարել օդակայանի տարածքում: Պաշտպանության նախարարությունում հավելել են, որ ԱՄՆ-ի զինվորականները դեսանտավորվել են ամերիկյան C-17 բազմանպատակային ռազմավոխարական ինքնաթիռից:

Զորախաղերի մասնակիցներին են դիմել եւ հաջողություններ մաղթել Վրաստանի պաշտպանության ուժերի ղեկավար, գեներալ-մայոր Գիորգի Մաթիաշվիլին, ինչպես նաեւ հանրապետության պաշտպանության փոխնախարար Գրիգոր Գիորգաձեն:



Զորավարժություններին մասնակցում է 21 երկրից ժամանած ավելի քան 3000 զինվորական:



ՓՐԿՉԻ ՊԱՅՇԱՆՈՒԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ՝ ՎՐԱՑ ՈՒՂՂՈՒՄԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Օգոստոսի 19-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց Փրկչի Պայծառակերպության տոնը: Թբիլիսիի Սուրբ Երրորդության տաճարում մատուցվեց հանդիսավոր պատարագ:

ՎՐԱՍԱՆՈՒՄ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՎԱՋՈՒՄ Է

Վրաստանում գործազուրկների թիվը 2023 թ. երկրորդ եռամսյակում նվազել է 14,6 հազարով, այսինքն՝ 5,2 տոկոսով 2022 թվականի համապատասխան ժամանակաշրջանի տվյալների համեմատ:

Ըստ երկրի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ գործազուրկների թիվը տարվա երկրորդ եռամսյակի արդյունքներով կազմել է 266,9 հազար:

Ընդ որում, գործազուրկությունը նվազել է միայն քաղաքային բնակավայրերում: Քաղաքներում գործազուրկության մակարդակը կրճատվել է 2,5 տոկոսով, իսկ գյուղական բնակավայրերում այն աճել է 0,2-ով: Այնուամենայնիվ, քաղաքներում գործազուրկության մակարդակն ավելի բարձր է, քան գյուղերում՝ 17,7 տոկոս՝ 15,3 տոկոսի համեմատ:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ (25 օգոստոսի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.6387
1 ԵՎՐՈ	2.8640
100 ՌՈՒՔԼԻ	2.7898
1000 ԴՐԱՄ	6.8325

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ԹԵՆԳԻՉ ՑԵՐՑՎԱԶԵ. «ՎՐԱՍԱՆՈՒՄ ՆԿԱՏՎՈՒՄ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՊԵՐԻ ԱՎԵԼԱՅՈՒՄ»

(Ակիբաբը՝ 1-ին էջում)

(eris), թեպետ դա պաշտոնապես դեռեւս չի հաստատվել: Երկրի բնակչությունը կարող է հանգիստ լինել: Ero COVID-ի անվտանգությունը հուսալիորեն ապահովված է, թեպետ զգուշանում են պետք է

պահպանել եւ, երկրում կորոնավիրուսի կապակցությամբ իրավիճակը պահպանելու ու անցանկալի երեւոյթների կանխման համար, կարելու է նվազագույնի հասցնել ուշացած ախտորոշումներն ու ուշացած բուժումները: Ուստի, բնակչությանը կրկին կոչ են անում՝

վարակի առաջին իսկ ախտանշանների դեպքում դիմել բժշկի, անցնել թեստավորում, խուսափել մարդաշատ վայրերից եւ, վարակի հաստատման դեպքում, խստորեն հետեւել բժշկի ցուցումներին, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ հոսպիտալացվել: Դիմում են մա-

ե ընտանեկան բժիշկներին եւ պոլիկլինիկայում աշխատողներին՝ հիվանդների ստուգման ժամանակ անպայման անցկացնել պատվաստում, առանձնապես քրոնիկ հիվանդների եւ 60-ամց տարեցների համար,- հայտարարել է Թեմգիզ Ցերցվաձեն:

ԲԱՐԵԲԱՆՏԱԲԱՐ ՎՐԱՍԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՆՈՐ ՇՏԱՄԻ՝ EG.5-Ի ԴԵՊԵ ԶԻ ՀԱՍՏԱՏՎԵԼ

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը հայտնում է, որ Վրաստանում կորոնավիրուսի նոր շտամի ոչ մի դեպք չի հաստատվել:

«Վրաստանի Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի կողմից կորոնավիրուսի նոր շտամի՝ EG.5-ի ոչ մի դեպք չի գրանցվել: Վիրուսի նոր տարբերակների լաբորատոր հսկողություն է իրականացնում միայն Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնը: Վիրուսի նոր տարբերակ-

ները հաստատելու հնարավորություն ունի նաեւ Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնը, մասնավոր լաբորատորիաների կողմից նոր շտամների հաստատման վերաբերյալ որեւէ տեղեկություն չի տարածվել: Կենտրոնը շարունակում է ակտիվ հետեւել «Covid-19»-ի շրջանառվող տար-

բերակների, ինչպես նաեւ՝ այլ վիրուսների տարածմանը հանրապետությունում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ կորոնավիրուսի EG.5 շտամը չի առաջացնում ախտանշանների կամ ծանր հիվանդության զարգացում, որը տարբերվում է ներկայումս տարածված «Օմիկրոն» շտամից: Ուստի, այն չի պահանջում այլ արձագանք եւ կառավարվում է ստանդարտ արձանագրությունների համաձայն», - ասվում է տեղեկատվության մեջ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՆԻՆՈՑԻՆԴԱԿԱՆ ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԼԵՎԱՆ ԻՈՍԵԼԻԱՆՈՒ ՇԵՏ



Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը հանդիպեց Վրաստանի հանրային պաշտպան Լեւան Իոսելիանու հետ:

Հանդիպմանը քննարկեցին Սամցխե-Ջավախեթիում, մասնավորապես՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետում առկա իրավիճակը՝ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանի խոսքով, ուրախալի է, որ մունիցիպալիտետի ողջ տարածքով վարժապետ ամուսնության դեպքեր չեն գրանցվում, եւ գրեթե բոլորը ցանկանում են ստանալ բարձրագույն կրթություն՝ ինչպես Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, այնպես էլ արտերկրում:

ԼԱՅՆ ԾԱՎԱԽ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՅՔԻ ՄԵՉ ԵՆ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի տարածքում ակտիվ առաջ է տարվում ճանապարհային ենթակառուցվածքի ասֆալտապատումը:

Մասնավորապես, «Ջավախ ԱվտոԳա» ՍՊԸ-ի կողմից իրականացվում են Օրլովկայի (նախագծի արժեքը՝ 588 541 լարի), Փոքր Գոնդուրա-Ղուլալիս գյուղերի (նախագծի արժեքը՝ 1 539 000 լարի) ճանապարհների վերանորոգման-վերականգնման աշխատանքները:

Մունիցիպալիտետի տարածքում ընթացքի մեջ են նաեւ ենթակառուցվածքային մյուս նախագծերը: Օրինակ՝ Ժղանով, Եփրեմովկա, Կաթնատու, Օրոջալար, Սաթխա, Մեծ Խանջալի գյուղերում եւ Նինոծմինդա քաղաքի հողաբեկ ու Նորաշեն քաղաքում տեղադրվում են մանկական խաղահրապարակներ: Նախագիծը ֆինանսավորվում է տեղական բյուջեից, որի պայմանագրային արժեքը կազմում է 295 040 լարի: Աշխատանքներն իրականացնում է անհատ ձեռնեց Ռազմիկ Ղուլաշյանը:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Արմեն Բոդոյանի խոսքով՝ Օրլովկա գյուղում երբեք էլ ասֆալտ չի եղել:

- Այս ճանապարհի ասֆալտապատումը շատ կարելու է եւ անհրաժեշտ բնակչության հարմարավետ տեղաշարժի համար: Անչափ կարելու է նաեւ Փոքր Գոնդուրա-Ղուլալիս գյուղերի ավտոճանապարհների ասֆալտապատումը, ինչը կդրուրացնի բնակչության տեղաշարժը: Իսկ ինչ վերաբերում է մյուս նախագծերին, ապա մունիցիպալիտետի տարածքով մանկական ժամանցի ու մի շարք ռեկրացիոն գոտու բարեկարգում է պլանավորվում:

ԱՄԱԼՔԱԼՔԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, փոխքաղաքապետ Թեյմուրազ Մեղե-

լիձեի հետ, եղավ Մարտունի վարչական միավորումում, որտեղ ծանոթացավ ընթացիկ ենթակառուցվածքային աշխատանքներին:



Մասնավորապես, Մարտունի գյուղ տանող ճանապարհին, Փարվանա գետի խաչմերուկում շարունակվում են ավտոմոբիլային կամրջի շինարարական աշխատանքները:

Քաղաքապետի խոսքով՝ նշված կամուրջը կարելու է գյուղական բնակչության տեղաշարժի համար եւ ունի գործառնական մեծ ծանրաբեռնվածություն:

Ենթակառուցվածքի ծրագրի համար միջոցներ են հատկացվել տեղական բյուջեներից: Ընթացիկ նախագծի պայմանագրային արժեքը կազմում է 708 925 լարի:


Աշխատանքներն իրականացնում է «Ավթանդիլ Կաչկաչիշվիլի» ՍՊԸ «ճանապարհաշինական N2 բաժին» ընկերությունը:

Քաղաքապետը հանդիպել է նաեւ մարտունեցիներին, ծանոթացել քաղաքացիների կարիքներին եւ համապատասխան հանձնարարականներ տվել հարցերը ժամանակին լուծելու համար:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ



# ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ` ՀԱՅ ՈՒ ՎՐԱՅ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՆՎԻՐՅԱԼ ԶԱՎԱԿԻՆ



Օգոստոսի 23-ին անվանի բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ Գիվի Շահնագարը տոնեց իր 90-ամյա հոբելյանը: Հոբելյանի պատկանելի անյակին «Վրաստան» թերթը նվիրեց իր նախորդ համարի էջերից մեկը՝ ընթերցողին ներկայացնելով կենդանի լեզենդի կենսագրությունը, խոսքը, եւ գրչակիցների շնորհավորական ուղերձները: Բայց հոբելյանը մեկ ամբողջ տարի տեւելու ավանդույթ ունի, ու քանի որ հոբելյանը հայ գրականության թարգմանության վրաց գրականությունը հարստացրած Գիվի Շահնագարն է, երկու եղբայր ժողովուրդների բարեկամության արդի խորհրդանիշներից մեկը, ուն հանդես հայի ու վրացու սերը չի դադարում շնորհավորանքների տարափը շարունակվում է...

## ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ԲՆՕՐԻՆԱԿԻ ՈԳԻՆ ՈՒ ԽՈՍՔԸ ՓՈՒՍԱՆՑՈՂ ԹԱՐԳԱՆԻՉԸ


Այսօր ճանաչված բանաստեղծ եւ թարգմանիչ, Վրաստանի գրողների միության եւ Հայաստանի գրողների միության պատվավոր անդամ, Վրաստանի «Պատվո» շքանշանի ասպետ, Սագուրամոյի եւ Մաչաբելիի մրցանակների դափնեկիր, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի, Հայաստանի Մովսես Խորենացու անվան շքանշանակիր Գիվի Շահնագարի հոբելյանն է:

Գիվի Շահնագարի անունը հայտնի է վրաց բոլոր գրասերներին: Նա բանաստեղծ է, թարգմանիչ, գրականագետ, ուն մարդկային օրինակով ու ստեղծագործությամբ մի շարք սերունդներ են դաստիարակվել:

Պարոն Գիվին ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետը: Վաթսուն տարուց ավելի է, ինչ թարգմանում է հայկական, ռուսական, օսական ու արբազական պոեզիան: Առաջին թարգմանությունը հրատարակեց 1952 թվականին: Գիվի Շահնագարի թարգմանությունների թվում հատկանշական են Սայաթ-Նովայի «Բանաստեղծությունները» (1972թ.), Պ.Սեւակի «Եղիցի լույս» ժողովածուն (1978), Կ.Վոյտիլի «Ոսկերչի արհեստանոցի դիմաց» դրաման (2000): Նա վրաց լեզվով հնչեցրել է հայ բանաստեղծներ Գ.Նարեկացու, Ա.Իսահակյանի, Ե.Չարենցի, Վ.Տերյանի, Գ.Շիրազի, Ս.Կապուտիկյանի, Գ.Սահյանի գործերը: Նրան են պատկանում նաեւ Ա.Պապայանի, Պ.Ջեթունցյանի, Ժ.Հարությունյանի պիեսների թարգմանությունները:

Գիվի Շահնագարին 1989 թվականին շնորհվեց Եղիշե Չարենցի անվան մրցանակ, իսկ 1998 թվականին՝ Ֆրիտոֆ Նանսենի անվան միջազգային մրցանակ: Նրա թարգմանությունը միայն թարգմանական գրականությունն է: Դա վրացական բարեխղճությամբ հագեցված բանաստեղծական խոսք է: Անկրկնելի ոճը, խոսքի եւ արտահայտության ճիշտ ընտրությունը, բնօրինակին նրա թարգմանության մեծությունը ընթերցողին ճշտորեն փոխանցում է ոչ վրացի հեղինակի ստեղծագործությունը:

Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարությունը հարգալից եւ երախտիքով շնորհավորում է պարոն Գիվի Շահնագարին՝ հոբելյանի առիթով, մաղթում առողջություն եւ երկարակեցություն:



Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարություն

## 20-ՐԴ ԴԱՐԻ ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐԸ

Վրաց մտավորականությունը քաջատեղյակ է այդ մեծ մարդու արժանիքներին, ով 20-րդ դարի վրաց գրականության կենդանի մատենագիրն է, միաժամանակ, հիանալի օրինակ, թե ինչպես արժանիորեն կարելի է ծառայել վրաց եւ հայ ժողովուրդների ճշմարիտ բարեկամությանը...

Պարոն Գիվին բոլոր սերունդների համար թանկագին անձնավորություն է իր անխոնջ աշխատանքով, անձնավորությամբ ու սիրով: Պարոն Գիվին բոլոր այդ հատկություններն ունի եւ վայելում է բոլորի հարգանքը: Երկարակեցություն, Չեզ, պարոն Գիվի:



Սերգո Վարդուսանիծե

Բանասիրական եւ պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր

## ՄԵՆՔ ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՊԱՆԾԱԼԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՈՎ



Այսօր լրացավ հայտնի բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ եւ Թբիլիսիի պետական համալսարանի ճանաչված շրջանավարտ Գիվի Շահնագարի 90-ամյակը:

Պարոն Գիվին շնորհավորում ենք ծննդյան օրվա առթիվ: Մաղթում ենք առողջություն, առույգություն, երկարակեցություն եւ ստեղծագործական առաջընթաց:

Թբիլիսիի պետական համալսարան

## ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻՆ ԱՆՍՆԱՑՈՂՆԵՐ ՆՎԻՐՈՒՄՈՎ

Օգոստոսի 23-ին լրացավ Վրաստանի գրողների միության եւ Հայաստանի գրողների միության պատվավոր անդամ, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի, Վրաստանի «Պատվո» շքանշանակիր, Վրաստանի գրողների միության Իվ.Մաչաբելիի մրցանակի եւ Հայաստանի Հանրապետության Մ.Խորենացու անվան մեդալակիր, գրող, թարգմանիչ Գիվի Շահնագարի 90-ամյակը:

Հոբելյանի առթիվ հայ եւ վրաց ժողովուրդների մեծ զավակին հասցեագրված շնորհավորական ուղերձ է հղել Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Սմբատյանը:

Ուղերձում Հայաստանի դեսպանը, մասնավորապես, ընդգծել է, որ ունենալով երկու հայրենիք, սիրելով հավասարապես երկու ազգ ու ժողովուրդ՝ Գ.Շահնագարը կյանքն անմնացորդ նվիրել է վերջիններիս մերձեցմանը՝ իր կենսուղին դարձնելով երկու քրիստոնյա ժողովուրդներին միացնող ամրակուռ կամուրջ, հայի ու վրացու հազարամյակների բարեկամության առիավատյա ու խորհրդանիշ:



Աշոտ Սմբատյան

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան

**ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ԶՐԱՅՏԱԳՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓԱՍՏԵՐ**

«Թբիլիսիի օդանավակայան» եւ «Բաթումիի օդանավակայան» մաքսային անցակետերում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են տարբեր երկրների քաղաքացիներին, նրանց պատկանող բեռն ու տրանսպորտային միջոցները:

Խուզարկության արդյունքում հայտնաբերվել է չհայտագրված 10 785 եվրո, 169 300 ԱՄՆ դոլար եւ 3 200 լիկել: Չհայտագրված ընդհանուր գումարի լարիի համարժեքը կազմել է 478 117,52 լարի:

Վրաստանում գործող օրենսդրության համաձայն՝ իրավախախտում թույլ տված քաղաքացիները տուգանվել են 47 811,752 լարիով:

**ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Ե ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ «Ketamine»**

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության աշխատակիցները, մաքսային անցակետերում եւ ձեւակերպման տնտեսական գոտիներում, մաքսային ընթացակարգերի իրականացման ժամանակ «Թբիլիսիի օդանավակայան» մաքսային անցակետում, կասկածի հիման վրա, խուզարկել են Ուկրաինայի քաղաքացի **Լ.Ֆ.-ի** ուղեբեռը:

Մանրակրկիտ խուզարկության արդյունքում հայտնաբերվել է առանձնակի մեծ քանակության՝ 9,3 կիլոգրամ, հատուկ վերահսկողության ենթակա, «Ketamine» հոգեբուժական դեղորայք: Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, առաքվել են Ներքին գործերի նախարարության համապատասխան ծառայությանը:

**ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Ե ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԹՄՐԱՆՅՈՒԹ**

Վրաստանի ֆինանսների նախարարության մաքսային դեսպարամենտի եւ Վրաստանի ներքին գործերի նախարարության կենտրոնական քրեական ոստիկանության դեսպարամենտի կողմից համատեղ անցկացված օպերատիվ եւ հետաքննչական միջոցառման արդյունքում «Թբիլիսիի օդանավակայան» մաքսային անցակետում հայտնաբերվել է մեծ քանակության «կոկաին» կոչվող թմրանյութ:

Մաքսային վերահսկողության շրջանակներում, մաքսակետի լիազոր աշխատակիցները, կասկածի հիման վրա, որ սահմանը հատող քաղաքացու մարմնում կամ մարմնի վրա պահված է մաքսային վերահսկողության ենթակա ապրանք, խուզարկել են Բրազիլիայի քաղաքացի Ա.Մ.-ին: Անձնական եւ ուղեբեռի խուզարկության, **ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ԿԱՆԽՎԵԼ Ե ՈՍԿԵ ԶԱՐԴԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ**

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, «Սարփի» մաքսային անցակետում, կասկածի հիման վրա, խուզարկել են Վրաստանի եւ օտար երկրների քաղաքացիների:

Արդյունքում հայտնաբերվել են չհայտագրված, ընդհանուր առմամբ, 198,91 գրամ քաշով ոսկե զարդեր:

Չհայտագրված ապրանքի ընդհանուր արժեքը կազմում է 16 585,94 լարի:

Վրաստանում գործող օրենսդրության համաձայն՝ օրինախախտում թույլ տված քաղաքացիները տուգանվել են 17 317, 45 լարիով:

**ԿԱՆԽՎԵԼ Ե ՀՐԱՁԵՆԻ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ**

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային դեսպարամենտի աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Թուրքիայի քաղաքացի Օ.Գ.-ի ավտոմեքենան: Մաքսային ընթացակարգը իրականացնելիս հայտնաբերվել է հրազեն եւ 40 փամփուշտ:

Գ ո Ր Ժ Ի նյութերը, հետագա արձագանքման համար, առաքվել են Վրաստանի ներքին գործերի նախարարություն:

մարմնի ռենտգենյան ստուգման արդյունքում, հայտնաբերվել է թմրանյութի 125 փաթեթ, 1,352 կիլոգրամ «կոկաին»:

Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, առաքվել են Վրաստանի ներքին գործերի նախարարության համապատասխան ծառայություն: